Հավելված 2
Երևանի քաղաքապետի
05. 03. 2020 թ.
հ.808-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի հարակից՝ Ազատության հրապարակի ու դրա շրջակայքի, Մեսրոպ Մաշտոց և Սայաթ-Նովա պողոտաների, Թումանյան և Տերյան փողոցներով պարփակված գոտու վերականգնման ու բարեկարգման, քաղաքային նշանակության հանգստի գոտու տվյալ հատվածի գեղագիտական գրավիչ միջավայրի ստեղծման շինարարական աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծվող հաձնաժողովը քննարկելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված լանդշաֆտային ճարտարապետություն-դիզայն հայեցակարգի բաց հրապարակային մրցույթին ներկայացված Առաջարկները և ընտրելու է հնարավոր ու իրատեսական տարբերակներ՝ հետագա աշխատանքների առաջադրանքի ձևավորման համար:
2.Հանձնաժողովը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Հանձնաժողովի նպատակներն են՝
1) Հաստատում է մրցույթի հրապարակային ծանուցման տեքստը, նշելով առաջարկների ներկայացման ժամկետները, մրցույթի առաջարկները քննարկելու, գնահատելու, որոշման ընդունման, ծրարները բացելու և ամփոփելու, նիստի վայրը, օրը և ժամը, մրցույթի կանոնակարգին ծանոթանալու վայրը (կանոնակարգը զետեղում է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում), գնահատման կարգը, մրցույթի արդյունքների հրապարակման ժամկետը և այլն,

2) Մրցույթին ներկայացված առաջարկների քննարկումը, գնահատումը, որոշման ընդունումը (պահպանելով մասնակիցների գաղտնիությունը), ծրարների բացումը և արդյունքների ամփոփումը հանձնաժողովի նիստում,
3) Մրցույթի հաղթողի ճանաչման վերաբերյալ որոշման ընդունումը,
4) Մրցույթի արդյունքների հրապարակումը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովի գործունեությունը իրականացվում է նիստի/երի/ միջոցով:
5.Հանձնաժողովի կողմից արդեն ընդունված մրցութային աշխատանքները ցուցադրության համար (5 աշխատանքային օրվա ընթացքում) ներկայացվում են մրցույթի կազմակերպչի կողմից նշված հասցեով (ք.Երևան, Երևանի քաղաքապետարան Արգիշտի փող. հ.1):
6.Հանձնաժողովը մրցույթի առարկա հանդիսացող աշխատանքները գնահատելիս և հաղթողին որոշելիս՝ հաշվի է առնում նաև Երևանի քաղաքապետին կից ստեղծված քաղաքաշինական խորհրդի կարծիքը (որը հնարավոր է ձևավորել Երևանի քաղաքապետարանի Արգիշտի փող. հ.1 հասցեում ցուցադրման ներկայացված 5 աշխատանքային օրերի ընթացքում):
7.Նիստերն անցկացվում են հանձնաժողովի կողմից հաստատված ցանուցմամբ նախատեսված օրերին, ժամերին և վայրերում:
8.Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը: Հանձնաժողովը որոշումներն ընդունում է անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, ձայների հավասարության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:
9. Մրցույթի մրցանակային ֆոնդը կազմում է 3 000 000 ՀՀ դրամ:
10. Մրցույթին ներկայացված աշխատանքների քննարկումը, գնահատումը, որոշման ընդունումը, ծրարների բացումն ու ամփոփումը կատարվում է մրցութային հանձնաժողովի կողմից նախատեսված օրը, ժամին և վայրում՝ մրցույթի հայտերն ընդունելու վերջին օրվանից առնվազն երեք օր հետո (նկատի առնելով նաև Երևանի քաղաքապետարանի Արգիշտի փող. հ.1 հասցեում աշխատանքների ցուցադրման համար նախատեսված հինգ աշխատանքային օրերը), կարող է ցուցադրվել բացառապես հայտերի բացումից հետո:
11. Հանձնաժողովի անդամները գնահատում են քննարկվող Առաջարկները՝ լրացնելով գնահատման թերթիկը: Յուրաքանչյուր առաջարկ գնահատվում է 10 բալային համակարգով:
12.Հանձնաժողովը ընդունում է ներկայացված Առաջարկներից հաղթողի ճանաչման վերաբերյալ որոշում (ծրարների բացումը կկատարվի հանձնաժողովի կողմից առաջարկների վերաբերյալ հաղթողի ճանաչման մասին որոշումն ընդունելուց հետո):
13. Արդյունքների հրապարակմամբ Հանձնաժողովի կողմից հաղթող կճանաչվի առավելագույն միավորներ հավաքած մասնակիցը:
14.Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Արձանագրությունը ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած Հանձնաժողովի անդամների կողմից:
15.Մրցույթի հաղթող ճանաչված մրցանակակրի դրամական պարգևը փոխանցվում է մասնակցի կողմից նախապես տրամադրված իրեն բանկային հաշվին *(.....ժամկետում):*
16.Մրցույթում հաղթած, ինչպես նաև մրցույթին ներկայացված մյուս հայեցակարգերը համարվում են Երևան համայնքի սեփականությունը: Երևան համայնքը իրավունք է ձեռք բերում մրցույթին ներկայացված հայեցակարգերը ցանկացած ձևով տնօրինել իր հայեցողությամբ:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

17.Հանձնաժողովի նախագահը՝
1) վարում է Հանձնաժողովի նիստերը.
2) ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը.
3) հսկողություն է Հանձնաժողովի որոշումների

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

18.Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստին.

2) լրացնում է գնահատման թերթիկը.

3) ստորագրում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը.

4) կատարում է է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները :

6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

19.Հանձնաժողովի քարտուղարը՝

1) Հանձնաժողովի անդամ չէ.

2)պատասխանատու է Հանձնաժողովին տրամադրվելիք նյութերի նախապատրաստման համար.

3) ապահովում է Առաջարկների գնահատման թերթիկների պատրաստումը.

4) Առաջարկները տրամադրում է Հանձնաժողովի անդամներին.

5) կազմում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը.

6) ապահովում է Հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող փաստաթղթերի պահպանումը և սահմանված կարգով արխիվացման նպատակով այդ փաստաթղթերի հանձնումը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

Մրցույթի հրապարակային ծանուցման տեքստի նախագիծ

Երևան քաղաքի Ազատության հրապարակի ու դրա շրջակայքի, Մեսրոպ Մաշտոց և Սայաթ-Նովա պողոտաների, Թումանյան ու Տերյան փողոցներով պարփակված գոտու բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով լանդշաֆտային ճարտարապետություն-դիզայն հայեցակարգի բաց հրապարակային մրցույթ

Մրցույթի նպատակը

Խթան ստեղծելով ճարտարապետների, դիզայներների, քանդակագործների լանդշաֆտի նախագծման ոլորտի փորձագետների, մասնագետների ստեղծագործական գործունեության համար, հավաքագրել յուրահատուկ, լավագույն հայեցակարգ-նախագծեր, որոնց քննարկման, ընտրության և ամփոփման արդյունքները հնարավորություն կտան բազմակողմանի և առավել լայն շրջանակների մասնակցությամբ ձևավորել առաջադրանքը, և դրա օգնությամբ մշակել այն նախագիծը, որի հիման վրա կիրականացվեն Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի հարակից՝ Ազատության հրապարակի ու դրա շրջակայքի, Մեսրոպ Մաշտոց և Սայաթ-Նովա պողոտաների, Թումանյան և Տերյան փողոցներով պարփակված գոտու (ներառյալ «Կարապի լիճ») վերականգնման ու բարեկարգման, քաղաքային նշանակության հանգստի գոտու տվյալ հատվածի գեղագիտական գրավիչ միջավայրի ստեղծման շինարարական աշխատանքները:

1.-Հրապարակը գոտիավորող հատակագծում՝ տարածքին հարակից Մեսրոպ Մաշտոց և Սայաթ-Նովա պողոտաների մայթերն ընդգրկված չեն տվյալ մրցութային ծրագրի մեջ

2.-այգու համակարգի տարածական հորինվածքի կազմակերպմանն ու վերականգնմանն ուղղված քայլ

3.-քաղաքային նշանակության հանգստի գոտում ճարտարապետական, գեղարվեստական և լանդշաֆտային միջավայրի վերականգնում և առավել գրավիչ կազմակերպում

1.-հրապարակի ու դրա շրջակայքի՝ Մեսրոպ Մաշտոց և Սայաթ-Նովա պողոտաներով, Թումանյան ու Տերյան փողոցներով պարփակված գոտու (ներառյալ «Կարապի լիճ») լանդշաֆտի նախագծման նորարարական ուղղության ներդրում և զարգացում ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմամբ

2.-քաղաքի տվյալ կենտրոնական հանգստի գոտու նկատմամբ հոգատարության և ուշադրության դրսևորում, որպես ***հետագա կապիտալ կառուցապատումներից*** *զերծ անձեռնմխելի տարածքի, քաղաքացիների հանգստի համար էկոլոգիապես կայուն, հարմարավետ տարածության պատկերի ձևավորում:*

Գաղափարը

Երևան քաղաքի պատմական միջուկում, քաղաքաշինական կարևոր դիրք և ճարտարապետական արժեք ներկայացնող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների (հանդիսատեսային շենք, Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն և «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահ) պահպանության գոտում ծավալատարածական դոմինանտների ընկալման տեսարանները մեծացնել, միջավայրը խաթարող Ազատության հրապարակի ու դրա շրջակայքի, Մեսրոպ Մաշտոց և Սայաթ-Նովա պողոտաների, Թումանյան և Տերյան փողոցներով պարփակված գոտու տարածքում ստեղծել համահունչ կազմակերպված էկոլոգիապես բարելավված լանդշաֆտ, նպաստելով մշակութային ժառանգության պահպանմանը, ինչպես նաև զբոսաշրջային գրավչության բարձրացմանը:

Մասնակցության պայմանները

- Մրցույթին կարող են մասնակցել ֆիզիկական անձիք՝ ուսանողներ, անհատ ճարտարապետներ և խմբեր, ինչպես նաև իրավաբանական անձիք՝ ճարտարապետական նախագծային կազմակերպություններ,
- Մրցույթը բաց է և անցկացվում է մեկ փուլով,
- Մրցույթը հայտարարվում է 2020թ. .....ամիս ..... օրը: Մրցութային առաջարկությունները ներկայացվում են տպագրված տեսքով (և էլեկտրոնային հասցեով-«shin-barekargum@yerevan.am») ոչ ուշ քան մրցույթի հրապարակային ծանուցումից 40 աշխատանքային օր հետո 2020թ. ամիս ..... օրը ժամը 18.00-ն, հետևյալ հասցեով՝ ք.Երևան , Արգիշտի 1, Հեռախոս 011/514-177 /Էլեկտրոնային հասցե (*ժամկետները կհստակեցվեն որոշման ընդունումից հետո, հանձնաժողովի կողմից մրցույթի ծանուցման տեքստի հաստատմամբ)*
- Հանձնաժողովի կողմից արդեն ընդունված մրցութային աշխատանքները ցուցադրության համար (5 աշխատանքային օրվա ընթացքում) ներկայացվում են մրցույթի կազմակերպչի կողմից նշված հասցեով (ք.Երևան, Երևանի քաղաքապետարան Արգիշտի փող. հ.1)
- Մրցութային նյութերի ներկայացման ձևաչափը (նյութերը ներկայացնել նկար տեսքով)
- Գծագրերի աջ կողմում, վերևի անկյունում վեցանիշ թվով նշվում է առաջարկի ծածկագիրը՝ շրիֆտի բարձրությունը 15մմ
- Առաջարկը ներկայացնելիս փակ ծրարի մեջ համապատասխան ծածկագրով ներկայացվում է հեղինակի (հեղինակների կազմ) անունն ու ազգանունը, կազմակերպության անվանումը, հասցեն, հեռախոսահամարը, բանկային հաշվի համարը, այլ կոնտակտային տվյալներ, անհրաժեշտության դեպքում՝ մասնակցության մասնաբաժինների տոկոսներով:

Մրցույթի մրցանակը

Մրցույթի մրցանակային ֆոնդը կազմում է 3 000 000 ՀՀ դրամ:

Մրցույթի հաղթողի ընտրության կարգը

- Մրցույթում նախատեսված է մեկ մրցանակային տեղ, որը գրաված մասնակիցը համարվելու է հաղթող
- Հանձնաժողովը մրցույթի առարկա հանդիսացող աշխատանքները գնահատելիս և հաղթողներին որոշելիս հաշվի է առնում նաև Երևանի քաղաքապետին կից ստեղծված քաղաքաշինական խորհրդի կարծիքը (որը հնարավոր է ձևավորել Երևանի քաղաքապետարանի Արգիշտի փող. հ.1 հասցեում ցուցադրման համար ներկայացված 5 աշխատանքային օրերի ընթացքում)
- Մրցույթին ներկայացված աշխատանքների քննարկումը, գնահատումը, որոշման ընդունումը, ծածկագրերի ծրարների բացումն ու ամփոփումը կատարվում է մրցույթի կազմակերպման հանձնաժողովի կանոնակարգի համաձայն
- Հանձնաժողովի անդամները գնահատում են քննարկվող Առաջարկները՝ լրացնելով գնահատման թերթիկը: Յուրաքանչյուր առաջարկ գնահատվում է 10 բալային համակարգով (հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, ձայների հավասարության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է):
- Հանձնաժողովը ընդունում է ներկայացված Առաջարկներից հաղթողի ճանաչման վերաբերյալ որոշում: Ծրարների բացումը կկատարվի հանձնաժողովի կողմից առաջարկների վերաբերյալ հաղթողի ճանաչման մասին որոշումն ընդունելուց հետո:
- Արդյունքների հրապարակմամբ՝ հանձնաժողովի կողմից հաղթող կճանաչվի առավելագույն միավորներ հավաքած մասնակիցը:
- Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Արձանագրությունը ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների կողմից:
- Մրցույթի հաղթող ճանաչված մրցանակակրի դրամական պարգևը փոխանցվում է մասնակցի կողմից նախապես տրամադրված իրեն բանկային հաշվին /.....*ժամկետում*/:
- Մրցույթում հաղթած, ինչպես նաև մրցույթին ներկայացված մյուս հայեցակարգերը համարվում են Երևան համայնքի սեփականությունը: Երևան համայնքը իրավունք է ձեռք բերում մրցույթին ներկայացված հայեցակարգերը ցանկացած ձևով տնօրինել իր հայեցողությամբ:
- :

<u>Մրցույթի արդյունքների ամփոփում և հրապարակումը</u>

- Գնահատող հանձնաժողովի կողմից սահմանվում է* նիստի/երի/ անցկացման, արդյունքների ամփոփման և հրապարակման օրը, ժամը և վայրը (.....օրը,.....ժամը.....վայրը՝ ք.Երևան, Երևանի քաղաքապետարան Արգիշտի փող. հ.1), որը հրապարակվում է նաև Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում:/

**-ժամկետները սահմանելիս՝ հայտերն ընդունելու վերջին օրվանից /նայել մասնակցության պայմանների 3-րդ կետը / առնվազն երեք օր հետո, ինչպես նաև նկատի առնել Երևանի քաղաքապետարանի Արգիշտի փող. հ.1 հասցեում աշխատանքների ցուցադրման ներկայացված 5 աշխատանքային օրերի տևողությունը:*

<u>Հայեցակարգային հիմնադրույթներն ու նախապայմանները</u>

Նախատեսվում է՝

- նախագծվող տարածքի սահմաններն են՝ Մեսրոպ Մաշտոց և Սայաթ-Նովա պողոտաներով, Թումանյան ու Տերյան փողոցներով պարփակված գոտին, [illegible]

մակերես կազմող), այդ թվում նաև «Կարապի լիճ»-ը, բացառությամբ հրապարակը գոտիավորող հատակագծում՝ տարածքին հարող Մեսրոպ Մաշտոց և Սայաթ Նովա պողոտաների մայթերը, որոնք ընդգրկված չեն տվյալ մրցութային ծրագրի մեջ

- Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի հարակից Ազատության հրապարակի ծածկաշերտի ապամոնտաժում և դրա փոխարեն սալահատակի նախատեսում, որի նկարվածքի և նյութի ընտրության սահմանափակումներ չեն սահմանվում
- խստիվ արգելվում է որևէ նոր շինարարական ծավալի նախատեսում
- բարեկարգվող հետիոտն ուղիներն ու կանաչ գոտիները միմյանց կապել սահուն հատակագծային լուծումներով՝ ապահովելով ամբողջ այգու միասնական շարունակական համակարգը
- -հաշվի առնել նախագծվող տարածքի գլխավոր առանցքի և ստորգետնյա տարածք մտնող ուղիների անարգել շարժումը
- -հնարավորինս մեծ կանաչապատ ծածկույթ ապահովել,
- -վնասված և նստվածքներ ունեցող սալահատակների, եզրաքարերի փոխարինում, վերականգնում,
- -հարմարավետ հետիոտն շարժման ճեմուղիների և անցուղիների ստեղծում, դրանց արտաքին լուսավորության կազմակերպում,
- -նստարանների, աղբամանների դիզայնի մշակում և տեղադրում
- - գոտում գոյություն ունեցող ճարտարապետական փոքր ձևերի կանոնակարգում
- -սիզամարգերի թարմացում և կանաչապատում
- -տարածքում հաշմանդամություն ունեցող և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժման մատչելիությունն ապահովող միջոցառումներ
- -հայեցակարգ-նախագիծը կարող է ներառել ցանկացած լուծումներ և տարրեր, առանց նյութերի, տարրերի և մանրամասների սահմանափակման: Հայեցակարգ-նախագիծը մշակելիս հաշվի առնել քաղաքային տարածքների բարելավման (բարեկարգման և կանաչապատման) ասպարեզում օգտագործվող ժամանակակից միտումներն (միջազգային պահանջներ և չափանիշներ) ու շինարարական նյութերը (ընտրությունը հեղինակների հայեցողությամբ),
- «Կարապի լիճ» ջրային կառույցի վերկառուցման և լիճը շրջակա միջավայրի հետ կապելու առաջարկ, պահպանելով նրա առկա նկարվածքը:

<u>Հայեցակարգի ներկայացվող նյութերի ցանկը՝</u>

- Գլխավոր հատակագիծ
- Բարեկարգման հատակագիծ-

(մասշաբները մրցույթի մասնակիցների հայեցողությամբ՝
մրցութային նախագծերը ներկայացվում են գաղափարն առավել ընկալելի դարձնելու և շահեկան մատուցելու ձևաչափով)

- Տարածական տեսքեր, այդ թվում վերականգնվող կանաչ հատվածների եռաչափ պատկերների համադրում տարածքի լուսանկարների վրա
- Գաղափարը բնութագրող այլ գծագրեր, դետալներ և այլն
- լուծումները ցուցադրող գծագրերի մասշաբները մրցույթի մասնակիցների հայեցողությամբ
- կատարումը գրաֆիկական համակարգչային ծրագրերի միջոցով՝ նկար տեսքով ներկայացնել
- Նախագիծը բացատրագրի հետ , որում նշվում են.

-զբաղեցնող

-օգտագործվող նյութերը
-այլ տեղեկատվություն մրցույթի մասնակցի ցանկությամբ

Գնահատող հանձնաժողով

Գնահատող հանձնաժողովի կազմում ներգրավված են՝

Հայկ Մարության	Երևանի քաղաքապետ
Արթուր Մեսչյան	Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ
Ավետ Պողոսյան	Կենտրոն վարչական շրջանի ղեկավար
Գրիգոր Հարությունյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ
Գևորգ Նավասարդյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի տեղակալ
Անդրանիկ Սեդոյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար
Նարինե Խաչատուրյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (համաձայնությամբ)
Արմեն Ղուլարյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ (համաձայնությամբ)
Կարո Այվազյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության խորհրդական (համաձայնությամբ)
Վահե Գուլգուլյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության, շինարարության և բարեկարգման բաժնի գլխավոր մասնագետ /քարտուղար/

Կից նյութը՝

•Տարածքի հատակագիծ dwg ֆորմատով:

Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի քարտուղար ՎԱՀԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ